ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ARMATS
Closed Joint-Stock Company
АРМАЭРОНАВИГАЦИЯ
закрытое акционерное общество
AB certification

I.Gasparyan 33, Yerevan 0042, Republic of Armenia,
Tel. +374 10 292929 (366), e-mail: staff@armats.am

№ 8.1-571
«04» 12 2023

ԱՁ Դավիթ Մնացականյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Մնացականյան,

Հայտնում ենք Ձեզ, որ <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և ԱՁ Դավիթ Մնացականյանի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2023թ.-ի մարտի 21-ին կնքվել է <<Ապրանքի մատակարարման>> թիվ 2.48 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Համաձայն Պայմանագրի պահանջների Դուք ստանձնել էիք անխափան սնուցման աղբյուրների և մարտկոցների լիցքավորիչների մատակարարման պարտավորությունը և ապրանքները Ձեր կողմից պետք է մատակարարվեր մինչև 2023թ.-ի հունիսի 30-ը: Էականորեն խախտելով Պայմանագիրը՝ մինչ օրս չեք կատարել Ձեր կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Ուստի.

- համաձայն Պայմանագրի 2.1.7 կետի Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:
- Համաձայն Պայմանագրի 2.1.7.1 կետի Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ծանուցում ենք Ձեզ, որ <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ն սկսած 05.12.2023թ.-ից միակողմանի լուծում է 2023թ.-ի մարտի 21-ին կնքված թիվ 2.48 պայմանագիրը:

Միաժամանակ խնդրում ենք Պայմանագրի և որակավորման ապահովման համար նախատեսված գումարը 10 (տաս) օրվա ընթացքում փոխանցել Պայմանագրում Գնորդի նշված հաշվեհամարին:

Հարգանքով՝

Ա.Գասպարյան
Գլխավոր տնօրեն

Կատ. Ա.Փահլևանյան
Հեռ 010 292929 /373